«2021Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ Ի ՓՈՒԼ

«2021թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 12-րդ պարբերաշրջանի 1-ին ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 30 միավոր:

Առաջին փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Առաջին փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել **press@gortsq.am** էլեկտրոնային հասցեին մինչև 2021թ. մարտի 31-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն **www.**gortsq.am կայքէջում՝ 2021թ. ապրիլի 1-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ **–** Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեզոր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2022 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

«2021Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ Ի ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հարց 1. Օրենսգրքով նոր տեսակի հարկի սահմանում նախատեսող ՀՀ օրենքները՝

ա) <u>կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից.</u>

բ) կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից.

գ) կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող ութերորդ ամսվա սկզբից:

Հարց 2. Պասիվ եկամտի ստացումը նշվածներից որին բնորոշ չէ՝

ա) ֆիզիկական անձին.

<u>բ) ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձին.</u>

գ) ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությանը:

Հարց 3. Նշված պնդումներից ո՞րն է սխալ՝

ա) <u>առևտրային կազմակերպության կողմից անհատույց ստացված դրամական միջոցները բոլոր դեպքերում ճանաչվում են հարկվող եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ ստացվել են.</u>

բ) առևտրային կազմակերպության կողմից անհատույց ստացված հողը ճանաչվում է հարկվող եկամուտ տասը տարվա ընթացքում.

գ) ոչ առևտրային կազմակերպության անհատույց ստացված ակտիվները համարվում են նվազեցվող եկամուտ:

Հարց 4. Ինչպե՞ս պետք է վարվի կազմակերպությունը, եթե, օրինակ, ակտիվների որևէ տեսակի վերաբերյալ հաշվապահական հաշվառման ստանդարտներում հաշվառման մոտեցումներ ներկայացված չեն՝

ա) որպես հիմք ընդունի հարկային օրենսդրությունը.

բ) իր հաշվետվություններում չճանաչի այդ ակտիվները՝ այդ մասին բացահայտելով ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում .

գ) առաջնորդվի նախկին համակարգում գործող նորմերով.

դ) առաջնորդվի նման և կապակցված հարցերին առնչվող հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

Հարց 5. Նշված ծախսումներից որը միանշանակորեն չի ներառվում պաշարների ինքնարժեքում՝

ա) պատրաստի արտադրանքի՝ գնորդներին հասցնելու հետ կապված տեղափոխման ծախսումները.

բ) պաշարների ներկրման հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման.

գ) պաշարների վերամշակման ծախսումները.

դ) փոխառության ծախսումները:

Հարց 6. Իրացման զուտ արժեքը որոշելիս նշված ծախսումներից որո՞նք են հանվում սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գնից՝

ա) վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները.

բ) վարչական վերադիր ծախսումները.

գ) պաշարների համալրման ծախսումները.

դ) «ա» և «գ» կետերում նշվածները:

Հարց 7. Նշվածներից որը չի դիտարկվում որպես հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն՝

ա) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից շահույթները (վնասները) սեփական կապիտալում արտացոլելու քաղաքականության փոփոխությունը դրանք ընթացիկ ժամանակաշրջանի զուտ շահույթը կամ վնասը որոշելիս արտացոլման քաղաքականությամբ.

բ) պաշարների՝ ՖԻՖՈ մեթոդով գնահատման բանաձևի փոփոխությունը միջին արժեքի մեթոդով գնահատման բանաձևի.

գ) որակավորվող ակտիվի ձեռք բերման, կառուցման կամ արտադրության հետ անմիջականորեն կապված փոխառության ծախսումները ծախս ճանաչելու քաղաքականության փոփոխությունը վերջիններս որակավորվող ակտիվի ինքնարժեքում ներառելու քաղաքականությամբ.

դ) բոլոր վերը նշվածներն էլ դիտարկվում են որպես հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն:

Հարց 8. Երկարաժամկետ դրամական փոխառությունների տրամադրում՝

ա) Դեբետ 145
Կրեդիտ 251.

բ) Դեբետ 412
Կրեդիտ 251.

գ) Դեբետ 144
Կրեդիտ 251:

Հարց 9. Ապահովագրական հատուցումների գծով ստացման ենթակա գումարների արտացոլում՝

ա) Դեբետ 229
Կրեդիտ 627.

բ) Դեբետ 222
Կրեդիտ 614.

գ) Դեբետ 221
Կրեդիտ 629:

Հարց 10. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հարկվող ժամանակավոր տարբերությունների նվազման գծով հետաձգված հարկի գումարների արտացոլում՝

ա) Դեբետ 422
Կրեդիտ 751.

բ) Դեբետ 422
Կրեդիտ 614.

գ) Դեբետ 542
Կրեդիտ 524:

«2021Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»
ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ Ի ՓՈՒԼԻ
ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«ԴԵԼՏ» ՍՊԸ կազմակերպությունը ստեղծվել է 10.01.2021թ.-ին և հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ներկայացրել է հայտարարություն, շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

2021թ.-ի առաջին եռամսյակում կատարել է հետևյալ գործարքները՝

1. Վաճառել է սեփականության իրավունքով իրեն պանտկանող արտադրական տարածք 45 000 հազ. ՀՀ դրրամով, որի կադաստրային արժեքը կազմել է 52 000 հազ. ՀՀ դրամ:
2. Միջնորդական գործունեությունից հաշվեգրված եկամուտներ 1 200 հազ. ՀՀ դրամ,
3. Վաճառքի նպատակով ձեռք է բերել 18 000 հազ դրամի ապրանքներ, որից հաշվետու ժամանակաշրջանում իրացրել է 30 տոկոսը, 25 տոկոս հավելանով:
4. 3-րդ կետով ստացված ապրանքները կազմակերպության կողմից ստորագրվել են 25.04.2021թ.-ին:

Որոշել 2021թ.-ի 1-ին եռամսյակի վճարման ենթակա շրջանառությա հարկի գումարը:

Հավելված N1Հայաստանի
Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի
նախագահի2016 թվականի դեկտեմբերի
30-ի N 299 – Ն հրամանի

ՀԱՇՎԱՐԿ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ	Փաստաթղթի համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)					
1. Հարկ վճարողի հաշվառման համարը						
2. Հարկ վճարողը	«ԴԵLՏ» ՍՊԸ					
3. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը)						
5. Հաշվետու ժամանակաշրջանը	Տարի	2021	Եռամսյակ	I		

(դրամ)

5. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտների մասով հարկի հաշվարկ	
5.1. Հաշվետու եռամսյակում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ	6,750,000
5.2. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հարկի դրույքաչափ	5 %
5.3. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով հաշվետու եռամսյակի համար հաշվարկված հարկի գումար	337,500
5.4. Հաշվետու եռամսյակում ապրանքների ձեռքբերման ծախսերի գումար	18,000,000
5.5. Հարկի գումարից նվազեցվող գումարի հաշվարկման համար ապրանքների ձեռքբերման ծախսերի գումարի նկատմամբ դրույքաչափ	4 %
5.6. Հաշվետու եռամսյակում հարկի գումարից նվազեցվող գումար	720,000
5.7. Նախորդ եռամսյակներում ապրանքների ձեռքբերման ծախսերի մասով հարկի գումարից չնվազեցված և փոխանցված գումար	
5.8. Ընդամենը հաշվետու եռամսյակում հարկի գումարից նվազեցվող գումար	720,000
5.9. Հաշվետու եռամսյակի համար հարկի նվազագույն գումար (1,5%)	101,250
5.10. Հաշվետու եռամսյակի համար հաշվարկված վճարման ենթակա հարկի գումար	101,250
5.11. Ապրանքների ձեռքբերման ծախսերի մասով հարկի գումարից չնվազեցվող և հաջորդ եռամսյակներ փոխանցվող գումար	483,750

6. Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտների մասով հարկի հաշվարկ	
6.1. Հաշվետու եռամսյակում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ	
6.2. Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հարկի դրույքաչափ	0 %
6.3. Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտների մասով հաշվետու եռամսյակի համար հաշվարկված հարկի գումար	0
6.4. Հաշվետու եռամսյակում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված ծախսերի գումար	
6.5. Հարկի գումարից նվազեցվող գումարի հաշվարկման համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված ծախսերի գումարի նկատմամբ դրույքաչափ	0 %
6.6. Հաշվետու եռամսյակում հարկի գումարից նվազեցվող գումար	0
6.7. Հաշվետու եռամսյակի համար հարկի նվազագույն գումար (4%)	0
6.8. Հաշվետու եռամսյակի համար հաշվարկված վճարման ենթակա հարկի գումար	0

Շրջանառության հարկով հարկվող եկամուտների տեսակը	Եկամուտը [Ա]	Դրույքաչափը [Բ]	Հարկի գումարը [Գ]
7. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ	6,750,000	X	101,250
8. Երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ		1.5 %	
9.Խմբագրությունների կողմից թերթերի օտարումից եկամուտներ		1.5 %	
10. Արտադրական գործունեությունից եկամուտներ		3.5 %	
11. Վարձակալական վճար, տոկոս, ռոյալթի, անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներ	52,000,000	10 %	5,200,000
12. Նոտարական գործունեությունից ստացվող եկամուտներ		10 %	
13. Վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտներ		25 %	
14. Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ	0	X	0
15. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտներ		20 %	
16. Այլ գործունեությունից կամ այլ ակտիվների օտարումից ստացվող եկամուտներ	1,200,000	5 %	60,000
17. Ընդամենը	59,950,000	X	***5,361,250***